ւում. հրէան նստում, քնում է մերկ գետնի վրա, սփռելով իր տակ մի փոքրիկ մորթու կամ քչէի կտոր։ Ցերեկով, երբ ընտանիքին պատկանող արական անդամները մանրավաճառի պարկը շալակած դուրս են գալիս «գլուխ կնտելու», իգական սեռը, տանը մնալով, նստում է փողոցի դրան մէջ կամ բարձրանում է կտուրը թել մանելու և ուրիշ, մանրավաճառին վերաբերեալ, ցածր ապրանք պատրաստելու։ Հրէայ կանայք առհասարակ շատ կռւարար են լինում։ Ամեն մի ժամանակ դուք փողոցում կարող էք նկատել հրէուհու կըռիւը։ Այդ միջոցին նա գոռում է, որքան ոյժ ունի, փրփրում է, կատաղում է, հայհոյում է և շատ անգամ կախ է ընկնում իր հակառակորդի մազերից, որը ևս իրեն կողմից չէ ուշացնում հետևելու նրա օրինակին, և այսպիսով երկու հակառակորդք, ինչպէս երկու կռւարար աքաղաղներ, շուտով թաւալվում են փողոցի մոխրի մէջ և մի քանի րոպէից յետոյ կրկին վերկենալով մազերը ցրված, երեսները պատառոտված, շորերը գըզգըզված, աչքերը լիքը արիւնով, կատաղաբար նայում են իրարու երեսին ու կրկին յարձակվում մէկ մէկու վրա, աշխատելով, որքան կարելի է, ձեռք ձգել իրարու աչք ու երես, և այդ տևում է մինչև այն ժամանակ, երբ նրանցից մէկը վերջապէս անկարող է գտնվում շարունակելու պատերազմը կամ փախչում է կռւի ասպարիզից։ Յաղթողը մի արհամարհական նայուածք ձգելով իր յաղթված հակառակորդի վրա, ինքնաբաւական հեռանում է պատերազմի դաշտից։ Զարմանալին այն է, որ այդ մարդիք, որոնք նըստած են լինում ոչ հեռու կռւի ասպարիզից, բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում իրենց փափուկ սեռի ոչ—փափուկ մարմնամարզութեան վրա, նրանք մինչև անգամ գլուխները ևս չեն բարձրացնում նայելու այդ տեսարանին, որը մի կողմնակի մարդու հետաքրքրում է մինչև վերջին աստիճան։

Ղուբայի հրէաների մէջ գտնվում են շատ հարուստներ, որոնք չը նայելով իրենց ահագին կարողութեան, մաքրութեան մէջ շատ հեռու գնացած չեն իրենց աննախանձելի հայրենակիցներից։ Հրէայ աղջիկները յայտնի են իրենց գեղեցկութեամբ, նոցա մէջ այժմ դուք կարող էք նկատել Յուդիթներ և Եսթերներ, որոնց գեղեցկութեան տպաւորութիւնը անյայտանում է անմաքրութեան և աղտեղութեան տպաւորութեամբ՝ հրէան և հրէուհին մի մի մարմնացած զարշահոտութիւն են։

Ա. Զախարեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Օգոստոսի 9-ին

Մի ժամանակ հացի խնդիրն էր խորհրդածութեան նիւթ դարձել մեր քաղաքային վարչութեան և խորհրդարանի համար, իսկ վերջին օրերում քաղաքին միս մատակարարելու խնդիրը։ Օգոստոսի 4-ին, պ. քաղաքագլխի առաջարկութեամբ, մի արտակարգ նիստ կայացաւ որոշելու համար, թէ ի՞նչ միջոցների պէտք է դիմել մսավաճառների դէմ, որոնք ներկայ ամսվայ համար մսի վրա դրած տակսայով, այսինքն փունտը 7 կոպէկով՝ չեն կամենում ծախել միսը։ Յուլիսի 30-ին ձայնաւորների ներկայութեամբ դրած տակսան հաստատելուց յետոյ, խորհրդարանը որոշեց, որ եթէ պ. Սմբատ Մովսիսեանը (որ մի մրցող է դուրս եկած չարամիտ մսավաճառների դէմ) և նրան հետևող մի երկու պարոնները ինչ և իցէ հանգամանքներից ստիպված չը շարունակեն մսավաճառութիւնը, այն ժամանակ քաղաքային վարչութեանը իրաւունք է տրվում միս վաճառել քաղաքացիներին տնտեսական եղանակով, այսինքն իր սեփական փողով հրաւիրել մարդիկ և մի ուրիշ վարձատրութեամբ պատուիրել նրանց փունտը 7 կոպէկով միս բաժանել։ Պարսիկ մսավաճառները, որոնք միս մորթելուց յետ էին քաշվել և սպասում էին, թէ ինչ ելքի կը բերի իրանց սպառնալիքը, տեսնելով, որ իրանք քաղցած պէտք է մնան, սկսեցին ամենայն առատութեամբ միս մորթել և այնուհետև ամեն ինչ սկսեց ընթանալ իր կարգով։

Ուրեմն երևում է, որ եթէ չը լինէր պ. Սմբատ Մովսիսեանը, քաղաքը, մսից զրկվելով, պէտք է ենթարկվէր մսավաճառների կամակորութեանը, նրանց կապրիզին։ Այս պատճառով անկարելի է շնորհակալ չը լինել պ. Մովսիսեանցից և մի և նոյն ժամանակ չը զարմանալ մեր երևանցիների վրա, որոնք, սկզբից նախապաշարված, միշտ հեռու են փախչում մսավաճառութիւնից ու հացագործութիւնից, ամօթ համարելով իրանց կպչել սրանց նման կեղտոտ մի արհեստի։ «Չէ, կասեմ, երևանցիներ, այդ բանն ամօթ չէ. այլ ամօթ է բազազների չարսուում ծալապատիկ նստել առաւօտվանից մինչև երեկոյ և մի մուշտարի որսալու համար ամեն մի քսութիւն գործ դնել. ամօթ է կապկաբար հետևել մի քանիսին և գնալ Մօսկվա ապրանք բերելու համար, այն ինչ հին ապրանքի քառորդ մասը չէ ծախված։ Բաւական է, որ ձեզ համար ասեն, թէ այս ինչ մարդը Մօսկվա գնաց։ Պարսիկները կամաւ խլել են մեր ձեռքից երկու ամենագլխաւոր արհեստներ, այն է մսավաճառութիւնն ու հացագործութիւնը և զրկում են մեզ, երբ կամենում են, մեր ամենօրեայ կենսական պիտոյքներից։ Ի՞նչ բարձր և վսեմ վարմունք կը լինէր այն մարդու կամ հասարակութեան կողմից, որ մրցութեամբ առաջն առնէր այդպիսի գործողութիւնների։ Երևանցիները միջոց ունեն այդ բանն անելու, բայց չեն կամենում անել։

Սովի նշանները թէև անցան, բայց նրանց տըպաւորութիւնը մնաց մարդու յիշողութեան մէջ։ Այս պատճառով մեր այժմեան նահանգապետը, նահանգի ժողովուրդը սովից ազատ պահելու համար, մտածել է մի գեղեցիկ միտք և, ինչպէս լըսում ենք, սկսել է արդէն իրագործել այն։ Այդ միտքը գիւղերում ցորենի շտեմարաններ շինելն է. ինչպէս լսվում է, գիւղական ամեն մի ընտանիքից կալերի ժամանակ պէտք է ստացվի ցորենի մի որոշեալ քանակութիւն և յանձնվի գիւղում գտնվող մի ամբարում պահելու համար։ Հետևեալ տարում ամբարանոցի ցորենը գիւղացիները բաժանում են իրանց մէջ և ստացած բաժնի կրկնապատիկը տալիս են նոր ցորենից և այսպէս շարունակաբար է լինում, դիցուք, մի տաս տարի։ Անկարծիք, մի 10 տարուց յետոյ 100 տնից բաղկացած մի գիւղ կունենայ այդպիսով մի մեծ ամբար, որ հարկաւոր դէպքում կարող է փրկել գիւղականին մահից։ Իսկ եթէ ենթադրենք, որ մի 10 տարվայ ընթացքում ոչինչ անակնկալ փորձանք չը պատահի, այն ժամանակ գիւղական հասարակութիւնը կարող է ամբարի ցորենը մասամբ վաճառել և ստացած փողը գործ դնել բարենպատակ գործերի վրա։ Պ. Նահանգապետի միտքը, որի իրագործման համար մարդիկ են եղել ուղարկված գաւառի գիւղերը, մի քանի տեղ շինականների կողմից զարմանքով ու թերահաւատութեամբ է ընդունվել, որովհետև կարծել են, թէ ցորենի հաւաքելը մի տեսակ հարկ է տէրութեան կողմից, որ մի այլ միջոցով ծանրաբեռնվում է իրանց վրա։ Կարծում ենք, որ պ. Նահանգապետը առաջին փորձերից չի վհատի և կը շարունակի իր բարի գործը երկրի բարօրութեան համար։

Հետաքրքիր լուրեր կան հաղորդելու, որոնք թողնում եմ հետևեալ նամակի համար։

Յովհաննէս-Հեթում

ՆԱՄԱԿ ՄԱՆԳԼԻՍԻՑ

—

Օգոստոսի 9-ին

Թիֆլիսի բնակիչք Մանգլիսում յօժարութեամբ նուիրելով Թիւրքիոյ Հայաստանի հայազգի սովատանջների համար հարիւր տասն և եօթը րուբլի (117 ր.), սրա հետ ուղարկում են առ ձեզ այդ գումարը, խնդրելով ուղարկել ուր հարկն է։ Նուիրատուք սոքա են։

Սարգիս Քամանդարեանց 5 ր., Խ. Թ. Առվանեանց 6 ր., Ն. Հայկազեանց 6 ր., Սարգիս Տէր-Սարգսեանց 3 ր., Իվան Հախումեանց 3 ր., Պետրոս Մակարով 5 ր., Հայ ոմն 1 ր., Իվան Բագատուրով վրացի 3 ր., Սերգէի և Անտոն Գալուստեանց 1 ր., Սէրգէի Մեղվինեանց 2 ր., Յովհաննէս Խուդագեանց 1 ր., Աղեքսանդր Տէր-Շմաւոնեանց 3 ր., № № 1 ր., № № 1 ր., Ուսուցիչ ոմն 1 ր., Իվան Մինէիչ Մարտիրոսով 1 ր., Ստեփան Մելիքով 5 ր., Երիցփոխեանց 1 ր., Ստեփան Խանկալամով 1 ր., Ս. Արէշով 1 ր., Մ. Միրմիլով 2 ր., Վ. Կուսիկեանց 1 ր., Արսէն Միրզաեանց 5 ր., Յակոբ Միլլեան 2 ր., Սէրգէի Մալքարով 1 ր., Ալեքսի Տէր-Մկրտիչեանց 1 ր. 50 կ., Եագոր Եղիազարեանց 3 ր., Ստեփան Դիդզուրաբով 1 ր., Վասիլ Սեաննանց 1 ր., Արտեմ Նարինեանց 3 ր., Աւետիք Քարտաշեանց 1 ր., Գրիգոլ Կոպաձէ (վրացի) 1 ր., Կոստանդին Խիզանեանց 3 ր., Թադէոս Տէր-Յովսէփեանց 2 ր., Աննախանում Տէր-Ղազարեանց 5 ր., Նինոյ Տէր-Ղազարեանց 3 ր., Իվան Եակովլեվիչ Քամսեվ 1 ր., Ալեքսանդր Մելիք-փաշայեանց 2 ր., Միրիմանով 2 ր., Եագոր Միրզոեվ 3 ր., Խրիստափոր Դաւիթեանց 5 ր., Ալեքսանդր Ամիրով 1 ր., Խրիստափոր Քալանթարեանց 2 ր., Կորխմազ Բաշիբէուգ-Մելիքով 1 ր., Ջաղար Արեշով 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Ալեքսանդր Նարիմանեանց 3 ր., Յովսէփ Տէր-Սարգսեանց 3 ր., Արտեմ Սեանեանց 3 ր., Սարգիս քահանայ Տէր-Գրիգորեանց 50 կ., Տէր-Յակոբ քահանայ Մեհրաբեանց 2 ր.։ Ընդամենը 117 ր.։

Խաչատուր Առվանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 յուլիսի

Ձեր ազգօգուտ լրագրի անցեալ տարվայ թերթերից մէկի մէջ հրատարակվեցաւ, որ մի քանի հայ երիտասարդներ ձեռնարկել են հայերէն և հայերին վերաբերեալ օտար լեզուներով գրքերի հասարակաց մի գրադարան բանալու։ Եւ յիրաւի՝ մենք Թիֆլիսի Բէթլական ուսումնարանի մի քանի աշակերտներս այդ բանին ձեռնարկեցինք, բայց ստիպված լինելով զանազան կողմեր ցրուել և չունենալով յարմար և հաստատ տեղաբնակ մի ղեկավար՝ մենք մեծ յաջողութիւն չունեցանք մեր ձեռնարկութեան մէջ, իսկ այժմ գործը իր յարմար և գործունեայ ղեկավարը գտել է. մեծ. պ. Յովհաննէս Կուսիկեանը, տեղւոյս Բէթլական ուսումնարանի ուսուցիչը, ազգասիրաբար ոչ միայն մեր ձեռնարկի շարունակութիւնը յանձն առաւ, այլ և գրադարանի յարկի ու գրադարանապետի հոգն ևս իր վրա առաւ։ Ուստի մենք մեր գործունէութեան արդիւնքն ու հաշիւը յիշեալ պարոնին յանձնելով՝ պարտք ենք համարում մեզ նոյնը և հրապարակաւ մեր յարգելի նուիրատուներին տալ։

Հաշիւ. ձեռամբ օր. Տէր-Մարկոսեանցի, պ. պ. Ռոստոմեանցի (Թիֆլիսում), Պճեճկեանի, Պապինեանի, Չիլինգարեանի (Ախալքալաքում) և Կամսարականի (Երևանում) հաւաքվել են ընդամենը 304 կտոր գիրք և 117 ր. փող։

Գրքեր նուիրող պարոններից մեծագոյն մասը տորագրած չը լինելով իրանց անունները, մենք դրանց հաշիւը յանուանէ չենք կարող հրատարակել այստեղ. իսկ փող նուիրողներն են Թիֆլի-

---

մեծ յիմարութիւնս է համարել, քանի որ այդ տարրական համառօտ գծագրութեան դասերը ընդունված են, որպէս ամեն մի կանոնաւոր տարրական դպրոցներում, նոյնպէս և թէ տէրութենական և թէ ազգային միջնակարգ դպրոցների ստորին դասարաններում, իբրև տարրական հիմունք երկրաչափական արհեստին, կամ իբրև վարժութիւն աշակերտաց ձեռքերի և կամ կեանքի մէջ, պատահած միջոցում, գործադրելու համար, եթէ աշակերտը չը կամենայ շարունակել իր ուսումը բարձր դասարաններում։ Սորանից էլ երևում է պ. յօդուածագրի մանկավարժական գործի մէջ ունեցած քաջ հմտութիւնը....

Ասացինք արդէն, որ պ. յօդուածագիրը, եթէ բարեխղճաբար վերաբերվէր դէպի մեր գործունէութիւնը և բարեհաճէր հարցնել գոնէ մեր դպրոցի ներքին կեանքին մօտ եղող անձերից մէկին, անշուշտ կը տեղեկանար, որ մեր այդ տարրական դպրոցը, որին նա այդքան անարգել է անխնայ, իր 16 ամեայ գոյութեան շրջանում տուել է իր հասարակութեանը աւելի քան հարիւր և քսան տարրական ուսմամբ բաւականին զարգացած սաներ, որոնք իրանց մայրենի լեզուի, ռուսերէնի և այլ կարևոր առարկայից բաւականին հիմնաւոր պաշարով մտել են թէ տեղական և թէ օտար քաղաքներում եղած արքունի և ազգային դպրոցների 1, 2, և մինչև անգամ 3-դ դասարանները, այն ինչ մեր տեղական դպրոցների շատ քչից ընդունված են եղել նոյնպիսի դպրոցներ այդչափ մայրենի և ռուսաց լեզուի պաշարով և առարկաների գիտութեամբ։ Այստեղ աւելորդ ենք համարում թուել և այն բազմաթիւ սաներին, որոնք աւարտելով այս դպրոցում իրանց տարրական ուսումը, մտել են կեանքի շրջանում գործելու, որի մէջ և ինքնակրթութեամբ զարգանալով նորանցից շատերը եղել են թղթակիցներ պարբերական հրատարակութիւններին։ Գուցէ և սորանց վրա է, որ զարմանում է ինքը պ. յօդուածագիրը։ (Տես «Փորձի» № IV. երես 75. յօդ. փ.)։

Քիչ չէ զարմացնում մեզ և այն՝ թէ պ. յօդուածագիրը ինչ արդեօք հարկից կամ համոզմունքից ստիպված իր յօդուածի դէպի մեզ վերաբերեալ հատուածում, յանկարծ շեղվելով իր բարենպատակ գործի ընթացքից, սկսում է կնքել մեր ճակատը «կօշկակարի» և այլ մի քանի անվայել խօսքերի դրոշմով՝ մի քանի «Կիրակոսների և Թաթոսների հետ, հրաւիրելով միանգամայն մեզապիսեաց վրա մեր ժողովրդական արքունի ուսումնարանների պ. վերատեսչի ուշադրութիւնը, որպէս զի չը թոյլատրվի մեզ պէս «Արարաջեանցներին, Կիրակոսին և Թաթոսին», ժողովել մեզ մօտ բազմաթիւ խեղճ մանուկներին և նորանց «բարոյապէս նահատակելու» և կարծել թէ «Աստուծոյն զոհ ենք մատուցանում»։ Այն ինչ պ. յօդուածագիրը իր հատուածի միւս երեսում 1) ծանօթութեան մէջ, եր. 68, խորհուրդ է տալիս Երևանի թեմի վերատեսչի օգնական պ. Պառչեանցին, որ մեր քաղաքի միւս ծխական դպրոցները, որոնց անունները մի առ մի թուել է նա իր ստատիստիկայում, չենթարկել՝ մանկավարժական խիստ քննութեան, այլ շատանալ՝ ասում է, փոքր ինչ կարգ ու կանոնի տակ բերելով նորանց։ Միթէ մենք ևս, իբրև հայ, իրաւունք չունէինք արժանանալու մի այդպիսի քաղցր ակնարկութեան յօդուածագրի պարոնի կողմից։

Բայց թող միամիտ լինի մեր ստատիստիկոս պ. Գեղամեանցը, որ մեր թէ նախկին և թէ այժմեան մեծապատիւ պ. տեսուչներին վաղուց արդէն յայտնի լինելով մեր ուսուցչական գործունէութեան արդիւնքներ, մի և նոյն ժամանակ տեղական մանուկներին յարմար և օգտաւէտ լինելը, բազմիցս արժանացրել են մեզ իրանց խրախուսական շնորհակալեացը. նոյնպէս և մեր տեղական յարգոյ հասարակութիւնը իրօք տեսնելով իր որդոց այդ աստիճան զարգացումը թէ ուսման և թէ բարոյականութեան մէջ, միշտ յարգանօք և հաւատարմութեամբ վերաբերվել է և վերաբերվում է դէպի մեր գործունէութիւնը և դպրոցը, ուր համարեա միշտ խնդրանօք և ստիպանօք անգամ տեղաւորացնում է իր զաւակներին։

Այո, իրաւամբ զարմանում ենք մենք, թէ պ. յօդուածագիրը ի՞նչ հարկից ստիպված ամենայն ջանք գործ է դրել իր յօդուածում մեր գործունէութիւնը սևացնելու, քանի որ նա, իբրև խղճի տէր, միանգամայն և բաւականի զարգացած մարդ, կարող էր, եթէ իրօք մի թերութիւն նշմարել էր մեր դպրոցի վրա, որ այդ ամենայն մի մահկանացուի ձեռնարկութեան մէջ կարող է նշմարվել, իր բարի և օգտաւէտ խրատներով և խորհուրդներով օգնել մեր տկարութեանը և մենք ամենայն պատրաստակամութեամբ և սիրով կը փութայինք մեր թերութիւնները լրացնել, որքան մեր միջոցները և ընդունակութիւնը կը ներէին։ Եւ այդ մեզ ոչինչ ստորութիւն չէինք համարի, քանի որ որպէս ամբողջ մարդկութիւնը, նոյնպէս և ամենայն մի անհատ հետզհետէ աճելու և զօրանալու վրա է։ Քանի որ այսօրվան աշակերտը մի քանի ժամանակից յետոյ զարգանալով, ուսուցիչ է դառնում. Քանի որ այսօրվան մի դեռ խակ ուսուցիչը մի քանի տարուց յետոյ զանազան փորձերից խրատված համարեա մի բաւականին հմուտ իր նուիրական արհեստում վարժապետ է դառնում. Քանի որ մի որ և իցէ աստիճանաւոր, կամ վաճառական, կամ քարտուղար և կամ մինչև անգամ ստորին գործակատար և իր բարերարաց դէմ ապերախտ գտնվող անձն, հետզհետէ զարգանալով կեանքի գործունէութեան մէջ, կարող է քաղաքագլխի և կամ մի այլ բարձր պաշտօնի կոչմանը արժանանալ և այլն, և այլն, և ոչ թէ, ինչպէս ասում է առածը «յոնքը շինելու տեղ, աչքն էլ հանէր»։

Այդ իսկ պատճառաւ մենք էլ՝ չը ցանկալով միանգամայն անցկենալ համեստութեան սահմանից, փութանում ենք խոնարհաբար խորհուրդ տալ յիշեալ պ. յօդուածագրին, որ այսուհետև իր գրելիներհուն յօդուածներում, ինչ առարկայի վերաբերութեամբ էլ որ լինեն նորա, ամենից առաջ հետամուտ լինի, կամ լաւ ուշք դարձնէ իրողութեանց ճշտութեան վրա և ապա ըստ այնմ նկատողութեան կամ քննութեան առնի նորանց, և ո՛չ թէ ոմանց անհիմն և՝ մինչև անգամ կարող ենք ասել, նախանձոտ սրտից վիժած անխոհեմ շաղակրատութեանց վրա հիմնվելով, թոյլ տայ իր գրչին ազատօրէն իր ազգակից եղբօր սիրտը վիրաւորելու և կամ նորա պատիւը և անունը արատաւորելու, որ պարոնին մեծ պատիւ չէր բերի։ Որպէս զի՝ Կրիլովեան այն առակը, որ նա մեզ աւելի անպատւելու համար իր յօդուածում իբր օրինակ յառաջ է բերել, նոյն իսկ իր գլխին չը կատարվի։

Վերջացնելով նամակս, մեծապատիւ խմբագիր, խոնարհաբար խնդրում եմ, որ ՚ի սէր արդարութեան, բարեհաճէք մի փոքրիկ անկիւն շնորհելու սորան ձեր պատուական և անկողմնասէր լրագրի առաջիկայ թերթերից մէկում, որպէս զի մեր՝ նախանձու փուշոյ ներքև (գուցէ յանգէտս) ճշմարտութիւնը երևան ենելով՝ մեր անունը ՚ի զուր և անմեղ տեղ չարատաւորվի, որպէս մեր մեծերի, նոյնպէս և մեր բարեմիտ հասարակութեան առաջև։

Աղէքսանդր Արարաջեանց